


մէջ Աստուծոյ արքայութիւնը յայտնուում է իբրև մի կենսական զօրութիւն, որի սկիզբը թագուն է և աննշան, բայց որ շատ ընդարձակ՝ անսահման չափով աճել կարող է և իւր մէջ առնել այն բոլոր տարրերը, որոնք Երրա ազդեցութեան ներքոյ ընկնում են: — Այսպէս ուրեմն, քրիստոս սովորեցնում է Աստուծոյ արքայութեան վերայ իբրև մի դիւթական երևցիկ վերայ չնայել, որ պէտք է յանկարծակի մի անգամից իւր բոլոր նշաններով ու զօրութեամբ տեղի ունենայ՝ այլ իբրև մի բարոյական ոյժի վերայ, որ իւր զարգացման, իւր կատարեալ արտայայտութեան համար ժամանակ է պահանջում: Ինչպէս որ մանանիսի հատիկը պարունակում է արդէն ամբողջ բոյսը սողմնական վիճակի մէջ, այսպէս էլ իւրաքանչիւր քրիստոնեայ, որ մանանիսի հատի չափ հաւատ ունի՝ Աստուծոյ արքայութեան բոլոր տարրերը կրում է արդէն իւր սրտում և մանասից է ուրեմն այժմեանից այն բարիքներին, որ նորանից սպասուում է, բայց կատարեալ կերպով արքայութեան մէջ լինել կարող է նա միայն այն ժամանակ, երբ այլ ևս մարմնական ցանկութիւններ և հոգսեր ոյժ չունին նորա վերայ, այլ աստուածային սիրով բերմանուորում հոգին է նորա ամբողջ էութիւնը կազմում:

Կ. Վ.



ԹՈՒՂԹ ԿՈՒՆՏԱՆԱՅ ԶԱՅՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
Ի ՊԵՐՍՍ.

Երրահամ՝ Ա-ի յաջորդ կոմիտաս կաթողիկոսը, որ Սեբեդոսի ընծայած հաշուով* 611 կամ 612 թ-ին կամ. ամթոռ քարճրացած պէտք է լինի մեր եկ. գրականութեան մէջ յայտնի է անել իւր Անճինը նուիրեալք, գեղեցիկ շարականով և մեր եկ. պատմութեան մէջ ս. Հովհիսիմէի հրտշակերտ տաճարի կառուցմամբ: Թէեւ Հայր Զարբանաւեան

* Երրահամ կաթողիկոսին նա Խարոյ Բ-ի թագաւորութեան ԻԱ. տարին վախճանուած է ցոյց տալիս:

յիշում է (չայկական հին դպրութիւն. Բ. տպ. եր. 405), թէ Ռուպելեան եւ Կաղանկատուացին ուրիշ այլեայլ ճառեր եւ գրութեանք կընծային կոմիտասայ, եւ թէ Այս թղթերէն մէկ քանին Կաղանկատուացոյն գրոցը մէջ կը տեսնուին.՝ քայց մենք Ռուպելեանի պատմութեան մէջ յիշատակած ենք գտնում այն միայն, որ կոմիտաս իւր եղբորորդի Թէոդորոսին աշակերտելու է ուղարկել Սինեաց Մաթոնաղայ եպիսկոպոսի մօտ եւ որ նորա մահից յետոյ քրիստափոր կաթողիկոսն է յաջորդել. իսկ Կաղանկատուացու պատմութեան մէջ նորա անունն անգամ չկայ: * Դորա փոխարէն Սեբեդոս է, որ ամենից հին տեղեկութիւններն է տալիս կոմիտասի կաթողիկոսութեան մասին եւ որ պահել է նորա միակ տպագրութեամբ լոյս տեսած թուղթը՝ պատասխան երուսաղէմի Մողեստոս երեցի մի գրութեան:

Արարատի ներկայ համարին կից լոյս է տեսնում մի ուրիշ դասանաքանական թուղթ, որ կոմիտաս կաթողիկոսի անունն է կրում՝ իբրեւ հեղինակի եւ որ արտատպուած է կըրկին 5. 58 եւ 100 ծեռագիրներէից: Այս թղթի դասանաքանական արժէքը մեծ չէ, պատմական տեղեկութիւններ էլ նա չէ պարունակում: քայց այն հանգամանքը, որ Հայոց կաթողիկոսը ներկայանում է այստեղ յարաբերութեան մէջ Պարսկաստանի քրիստոնեաների հետ եւ հաստատում է մի ինչ որ միաբանութիւն, որի մէջ անխառն չէ Պարսից

* Թիշնէք ի դէպ, որ այդտեղ գտնուում է Արարատի նախորդ համարում հրատարակուած Վրթանէսի թղթի մի համառոտ օրինակը, տարբեր վերնագրով, Ինչպէս նորա վերնագիրն արդէն՝ Փարիզի տպագրութեան մէջ (եր. 412), ցոյց է տալիս (Պատասխանի թղթոյն Միթիարայ՝ Ամարասայ եպիսկոպոսի ի Հայոց, որ հայ հոյս կատարէր ս էր ուրեք բերեալ ի գրեանսն), այդ համառոտ օրինակը, որ մեր հրատարակածի նախաբանն ու վերջաբանը միայն ունի, թէեւ մեծ մասամբ աւելի ուղիղ ընթերցումներով նախնական համարուել չի կարող, այլ հաւանականաբար ինքը կաղանկատուացին հանել է նրա միջից ամբողջ դասանաքանական մասը՝ իւր պաշտպանած Աղուանից եկեղեցու համար անպատուաբեր գտնելով այն, որով սակայն այդ թուղթը անբովանդակ ու աննպատակ է դարձել և իւր իսկական նշանակութիւնը ստանում է միայն մեր հրատարակութեամբ:

արքունիքը՝ առանձին պատմական նշանակու-
թիւն է տալիս նորան: Պատմութիւնից յայտ-
նի է, որ պարսիկ միապետները Ն. դարից
սկսած, ինչպէս նաեւ նոցա յաջորդող
խալիֆաներն՝ առհասարակ աւելի քարեհամ
էին դէպի իրենց իշխանութեան ներքոյ գտ-
նուող նեստորականները, քան այդպէս կո-
չած միաբնականները. ըստառութիւն է
յոսորով Բ. Պարուէզ կամ Ապրուէզ թագա-
տորը, որ ինչպէս երևում է Շիրին թա-
գոնու եւ Սմբատ Բագրատունու ազդեցու-
թեան ներքոյ՝ վերջիններիս կողմն անցաւ եւ
ժամանակաւոր կերպով նոցա ասպարէզ տը-
աւ: Ներսէս Գ. Շինողի օրով Յունաց Կոս-
տանդին թագաւորին գրած թղթի մէջ, որ
ամբողջապէս ասանդել է մեզ Սեբէոս, հա-
յերը պատմում են, թէ ինչպէս յոսորով Բ.
մի ժողով է գումարել իւր արքունիքում
քրիստոնեայ երկու մեծ կուսակցութիւնների
մէջ եղած վէճը բննելու համար՝ Սմբատ
Բագրատունու նախագահութեամբ եւ քազմա-
թիւ հոգեւորականների ներկայութեամբ, ի
թիւս որոց էին նաեւ Երուսաղէմի Զարարիա
գերի պատրիարքը եւ Կոմիտաս Մամիկոնէից
ու Մատթէոս Ամատունեաց հայ եպիսկոպոս-
ները: Թէ այս ժողովի պատմութիւնը, ուր
դառն ի նպատակ չայոց է վճռուել եւ նեստո-
րականութիւն ու քաղկեդոնականութիւն հեր-
քուել են առասպել չէ, դորա մի նոր հաստա-
տութիւնը ներկայացնում է Կոմիտաս կա-
թոլիկոսի ներկայ թուղթը: Նորա վաւերա-
կանութիւնը կասկածի ենթարկող ոչ մի պա-
րագայ մենք չենք գտնում: ամեն ինչ այստեղ
համաձայն է ժամանակի ընթացիւնին: Այս
թղթի հետ մէկտեղ լոյս տեսնող յիշատա-
կարանն էլ ցոյց է տալիս, որ Կոմիտասի
կաթոլիկոսութեան օրով մի մեծ շարժում
է տեղի ունեցել՝ օր աւուր գորացող քաղ-
կեդոնականութեան եւ Պարսկաստանում տի-
րապետող նեստորականութեան դէմ՝ եղած
ըզոր քրիստոնեայ տարրերը իրար հետ կա-
պելով մի հաստարագօր եկեղեցական կազ-
մակերպութիւն յառաջ ընդելու համար, եւ
ահա չայոց, ինչպէս երևում է դեռ նոր
նոյն իսկ Պարսից արքունիքում, իշխանութիւն
ստացած կաթոլիկոսը միաբնութիւն է հաս-

տատում՝ մի շարք եպիսկոպոսների հետ (որոնց
անուններն իսկ հետաքրքիր պատմական յի-
շատակութիւն են ներկայացնում)՝ այն հի-
ման վերայ, որ երկու կողմերն եւս ընդունեն
միայն առաջին երեք տիեզերական ժողովնե-
րի դասանութիւնը եւ ի թիւս այլ հերձուածնե-
րի մերժեն նաեւ մի կողմից նեստորական եւ
քաղկեդոնական ուսմունքներն, միա կողմից
Եստիքէսի մուրութիւնն ու Սեւերոսի (միաբնա-
կութեան ներկայացուցիչ ինչպէս եւ առա-
ջինը) վարդապետութիւնը: Թէ որչափ դեր է
կատարել այս ձեռնարկութեան մէջ Սմբատ
մարգապանը կամ ինքը Կոմիտաս կաթոլիկո-
սը, եւ թէ ինչ հետեւանքներու ինչ գործնա-
կան արդիւնք է ունեցել նոցա հաստատած
միաբնութիւնը՝ մտում է մեզ դժբաղդա-
բար անցայտ: Կ. Վ.



Ն Ի Ի Թ Ե Ր

ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑԱԿԱՆ ԳԱՏՄԱԹԵՒՆՆԵՐ

Հ Ա Մ Ա Ր .

ՍԻՄԷՕՆ ԿԱՌՈՒՂԻԿՈՍԻ ԿԵՏԱՍԿՐՈՒԹԻՒՆԸ .

Փառք տնրածանելի համազոյ եւ միաս-
նական սուրբ Երրորդութեան՝ Հօր եւ Որ-
դւոյ եւ Հօգւոյն օրբոյ, այժմ եւ միշտ եւ յա-
ւիտեանս յաւիտենից. Ամէն: Որոյ ամենարա-
ւական ողորմութեամբն եւ անձառ շնորհիւն
յանկ ելիսոյ աւարտեցաւ տառս սրբարար եւ
կատարելագործիչ, յորում են ձեռնադրու-
թիւնք կաթոլիկոսի եւ եպիսկոպոսի եւ օրհ-

* Ներկայիս ահա իրրե կարեոր նիւթ
հայոց եկեղեցական պատմութեան համար, հրա-
տարակում ենք Մայր Աթոռիս Մատենադարանում
գտնուած № 495 շատ նշանաւոր ձեռագիր Մաշ-
տոցի յիշատակարանը նոյնութեամբ, որն իւր
մէջ բովանդակում է երջանկալիշատակ Սիմէօն
կաթոլիկոսի կենսագրութիւնը եւ սորա յաջորդ
Տ. Ղուկաս կաթոլիկոսի գահ բարձրանալը:
Այս Մաշտոցը բովանդակում է իւր մէջ միւսօժ
օրհնութեան, կաթոլիկոս եւ եպիսկոպոս ձեռ-
նադրելու մանրամասն կանոնները. այս գեղեցիկ ձե-
ռագիրն առանձին ուշադրութեան արժանի է, մանա-
ւանդ իւր ծաղկանկարների պատճառով, սորա մասին
ամսագրիս յաջորդ համարում կը խօսենք: